ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Գ. Նոյակերտ

22.12.2020 թ.

հեռ. 094-35-13-35

ՈՐՈՇՈՒՄ N 25

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14 - րդ հոդվածի 6 –րդ կետի պահանջներով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2020թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 09 նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ – 1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ – (ԶԵԿ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ,ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ):

2. 2021թ. -ի ՀԱՄԱՐ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ– (ԶԵԿ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ,ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ):
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ– (ԶԵԿ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ):
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ-(ԶԵԿ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ):
5. ՆՈՅԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ,ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ,ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ - (ԶԵԿ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ,ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ):
6. 2020 Թ –Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ(ԶԵԿ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ):

Քվեարկեցին՝ ավագանու անդամներ .

1. Ա.Պողոսյան - կողմ
2. Յ . Հարությունյան - կողմ
3. Վ.Դումանյան – կողմ
4. Վ.Մելքոնյան - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արարատի մարզի Նոյակերտ համայնքի ավագանու
2020 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 26–Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Նոյակերտ համայնքում տեղական տուրքերի դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, օրենքի իմաստով, այն համարվում է նոր

շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երեք հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներեք հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում երկու հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում երեք հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում քսաներեք հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,
դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ յոթանասունհինգ հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար վեց հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար հազար դրամ,
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,
գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,
դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Նոյակերտ համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Նոյակերտ համայնքում տեղական վճարների դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երեք հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝երեք հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝երկու հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հազար դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական մեկ հարյուր դրամ

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հազար դրամ

- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ երկու հազար դրամ:

գ.առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ համար քսան դրամ.

8) ջրահեռացման վճար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ հիսուն դրամ:

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ հինգ հազար դրամ.

10) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ.

11) Համայնքի տարածքում անշարժ գույքի օբյեկտներին նոր հասցե տրամադրելու համար՝ հազար դրամ:

12) Խմելու ջրի ջրամատակարարման վճար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ 160 դրամ մեկ խորանարդ մետրի համար:

13) Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների համար՝

1.Կենդանիների հիվանդությունների բուժման,կանխարգելման հարցերով խորհրդատվություն-500 դրամ :

2. Ծննդօգնություն՝ 1)Թեթև միջամտություն -1000 դրամ, 2)Ծանր միջամտություն- 5000 դրամ:

3. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառումկամայլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում հակաանասնահամաճարակային միջոցառումների)՝ մանրակենդան – 150 դրամ,խոշորակենդան- 350 դրամ:

4. Կենդանիների արտաքին և ներքին և արտաքին մակաբույծների դեմ պայքար – 500 դրամ:

5. Ախտահանություն 1 քառ.մ – 250 դրամ:

6. Միջատազերծում (դեզենտերիա) 1 քառ.մ. – 150 դրամ:

7. Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)- 1 քառ.մ - 200 դրամ:

8. Արհեստական սերմնավորում – 6000 դրամ:

9 . Կենդանու հերձում՝ մանրակենդան – 1000 դրամ,խոշորակենդան- 3000 դրամ:

10 .Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից յուրաքանչյուր այցելություն 1500 դրամ:

11.Կենդանիների նախասպանդային զննում ՝ կախված կենդանու տեսակից ,մանրակենդան – 1000 դրամ,խոշորակենդան – 2000 դրամ:

12.Կենդանիների հետսպանդային զննում մանրակենդան – 1000 դրամ,խոշորակենդան- 2000 դրամ:

ՆՈՅԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Գ. Նոյակերտ

հեռ. 077-35-13-95

22.12.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ N 26 -Ն

2021թ. -Ի ՀԱՄԱՐ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 18 դդ կետով , <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8 –րդ և 10 –րդ հոդվածների դրույթներով Նոյակերտ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Նոյակերտ համայնքի 2021 թ.-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :

Ավագանու անդամներ՝

1. Ա.Պողոսյան - կողմ
2. Յ . Հարությունյան - կողմ
3. Վ.Դումանյան – կողմ
4. Վ.Մելքոնյան - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Գ. Նոյակերտ

հեռ. 094-35-13-35

22.12.2020 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 27

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 1 –ին կետի 5) –րդ ենթակետի պահանջներով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Վարչական բյուջեի եկամտային մասի, հողի հարկի 09-01-00 ծրագրից պակասեցնել 1500,0 հազ. դրամ:

2. Վարչական բյուջեի նախադպրոցական կրթության (ՀՈԱԿ) 09-01-01-51 ծրագրի 4637 հոդվածից պակասեցնել 1500,0 հազ.դրամ:

3. Վարչական բյուջեի հաղի վարձավճար 22-50-00 ծրագրից պակասեցնել 600,0 հազ.դրամ:

4. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11-01-02-51 ծրագրի 4891 հոդվածից պակասեցնել 600,0 հազ.դրամ:

Քվեարկեցին՝ ավագանու անդամներ .

1. Ա.Պողոսյան - կողմ
2. Յ . Հարությունյան - կողմ
3. Վ.Դումանյան – կողմ
4. Վ.Մելքոնյան - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Գ. Նոյակերտ

22.12.2020թ

հեռ. 077-35-13-95

ՈՐՈՇՈՒՄ N 28

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 11) ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Նոյակերտ համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 296,0 հազ. դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020 թ.-ի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

1. Ա.Պողոսյան - կողմ
2. Յ . Հարությունյան - կողմ
3. Վ.Դումանյան – կողմ
4. Վ.Մելքոնյան - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Գ. Նոյակերտ

22.12.2020թ

հեռ. 077-35-13-95

ՈՐՈՇՈՒՄ N 29

ՆՈՅԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ,ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ,ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով.ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Նոյակերտի համայնքապետարանի աշխատակազմի,մանկապարտեզի, կուլտորային տան աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների՝ 1, 2, 3 :

Ավագանու անդամներ՝

1. Ա.Պողոսյան - կողմ
2. Յ . Հարությունյան - կողմ
3. Վ.Դումանյան – կողմ
4. Վ.Մելքոնյան - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1

Հաստատված է ավագանու

22.12.2020 թ. թիվ 29

որոշմամբ

ՆՈՅԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2021 թ.

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 9
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	*ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (Հազ. դրամ)*
Համայնքի ղեկավար	1	296,0
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	172,0
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար 1.2.1	1	169,0
Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1.1	1	141,0
Աշխատակազմի առաջի կարգի մասնագետ 3.2.1	1	140,0
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ 3.3.1	1	139,0
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Վարորդ	1	114,0
Պահակ	1	100,812
Հավաքարար	1	100,812
ԸՆԴԱՄԵՆԸ	9	1352,624

Համայնքի ղեկավար՝ Հ. Հարությունյան

Հավելված 2

Հաստատված է ավագանու
22.12.2020 թ. թիվ 29
որոշմամբ

ՆՈՅԱԿԵՐՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2021թ.

1. Աշխատակիցների թվաքանակը 4
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (հազ.դրամ)
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Մշակույթի տան տնօրեն	1	121.0
Հավաքարար	1	93,275
Գրադարանավար	1	103.0
(գլուխ.մասնագետ)Սպորտ հրահանգիչ	1	103.0
ԸՆԴԱՄԵՆԸ	4	420,775

Համայնքի ղեկավար՝ Հ. Հարությունյան

Հավելված 3

Հաստատված է ավագանու

22.12.2020 թ.-ի թիվ 29

որոշմամբ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՆՈՅԱԿԵՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

2021 թ.

N	ՊԱՇՏՈՆ	ՀԱՍՏԻՔ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓ (դրամներով)	ԱՇԽԱՏԱՎԱՐՁ
1	Մանկապարտեզի տնօրեն	1	139000	139000
2	Դաստիարակչուհի	2	137000	274000
3	Դաստիարակի օգնական	2	77000	154000
4	Երաժշտության դաստիարակ	0,5	124000	62000
5	Բուժքույր	0,5	124000	62000
6	Խոհարար	1	80000	80000
7	Խոհարարի օգնական	0,5	124000	62000
8	Տնտեսվար	0,5	124000	62000
9	Լվացքարար	0,75	84000	62000
10	Գլխավոր հաշվապահ	0,5	152000	76000
11	Պահակ	1	76000	76000
12	Օժանդակ բանվոր	0,5	124000	62000
	Ընդամենը			**1171000**

Նոյակերտ համայնքի ղեկավար՝ Հ.Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Գ. Նոյակերտ

հեռ. 077-35-13-95

22.12.2020 թ .

ՈՐՈՇՈՒՄ N 30

2020Թ –Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32 -րդ կետի պահանջներով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքապետարանի 2020 թ-ի գույքագրման փաստաթղթերը:

Ավագանու անդամներ՝

1.Ա.Պողոսյան - կողմ

2. Յ . Հարությունյան - կողմ

3. Վ.Դումանյան – կողմ

4. Վ.Մելքոնյան - կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ